

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԵԻՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՆՈՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԵՐ. ԹԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԹՈՎՄԱՍ ԱԼՎԱ ԷՏԻՍԸՆ

ՅՐԹՆ. ՄԸՍՐԼԵԱՆ

ԴԷՄՔԵՐ ԵՒ ԴԷՊՔԵՐ

Կ. ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ

ՄԻՍԻՍ ԲՐԻՍԹԻ

ՎԵՐ. Հ. ԿԷՕՎԳԱԼԱՅԺԵԱՆ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆՕՔԵՐ

ՔԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

ՔԱԿԱԻԱ ԵՒ ԿԱՆՏԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՔԱՐՈՋԻՉ ՄԸ ՈՐ Զ՝ՈՒՋԵՐ ԽՕՍԻԼ

ՄԱՐԴՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ՊՈԼԷՃ ՀԱԼԷՊ

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԱՒԵՑ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՀՈՎԻՒՆԵՐՈՒՆ
ԵՒ ՔԱՐՈՁԻՉՆԵՐՈՒՆ,

ՍԻՐԵԼԻ ԵՂՐԱՅՐՆԵՐ,

Կէ խնդրուի որ Միութեանս Վարչական Ժողովին Ատենապետին գրա-
ւոր Կերպով յայտնէք այն մասնաւոր նիւթերն ու հարցերը, զոր կը փափա-
քիք Միութեանս յառաջիկայ տարեկան Ժողովին մէջ խորհրդակցութեան
առարկայ ընել:

Ի դիմաց

Միութեան Ժողովի և Համաժողովին

Վարչութեան

Զ. Ա. ՊԵՉԵՅԱՆ

Հասցէ.—Zenope Bezjian, 47 Rue Jamblat, Beyrouth

Դ Ե Ր Չ Ա Կ



ՅԱԿՈԲ ՄԻՍԻՐԵԱՆ

ԿԸ ԳՈՀԱՅՆԷ ԱՄԷՆԷՆ

ՆՐԱՃԱՇԱԿ ՏԻԿԻՆՆԵՐՆ

ՈՒ ՊԱՐՈՆՆԵՐԸ

ՈՒՆԻ ՆԱԵԻ

ԱՐԴԻԱԿԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ

ՃՈՒՄ ԵՐԵՐՔ

Վասնիցի անձերու հետ ամսավարով
գործառնութիւն կ'ունենանք:

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՅԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ
4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Շարունակութիւն.

(Շար. եւ վերջ)

Տիկ. Տոտու Պայրամեան 5 տուար,

Բահնիւմայի միջոցաւ այրի կրն յը 5
տուար, Տիկ. Դրիստինէ Կէրթմէնեան
10 տուար, Լիւնի Հայ Աւետ. Եկեղեցի
350 Քրանգ, Pont-de thérny Հայ Ա-
ւետ. Եկեղեցի 50 Քրանգ, Հայ Աւետ.
Եկեղեցի Դահլրէ 233 ղըշ եգիպտական:

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 15, 1931

ԹԻԻ 22

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԵԻՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

Առաջին օրէն երբ մարդ կ'սկսի գործիւն առնել՝ կ'սկսի նաև տիեզերքի մէկ մասը կազմել, այսինքն ան կ'սկսի տիեզերքի հետ տեսական յարաբերութեան մէջ գտնուիլ։ Այս յարաբերութիւնը անխուսափելի է, թէպէտ մարդ կրնայ անոր դիտակից ըլլալ կամ չըլլալ։ Կ'ընդունինք որ, ինչպէս որ բոլոր խորհողները կ'ընդունին, այս տիեզերքը կը կառավարէ գերագոյն ոյժ մը, որ սակայն չի կրնար անձնաւորութիւն ունեցող մարդէն պակաս ըլլալ։ Հետեւաբար մարդ առաջին օրէն կը յարաբերի այս առնուազն անձնաւորութիւն ունեցող ոյժին՝ իմացականութիւն, կամք, զգայում ունեցող Հոգիին՝ հետ, զոր լաւագոյն բառի մը չըզոյսութեան համար կրնանք կոչել Գերազնայաւոր Ոյժ կամ՝ կրօնական բառով Աստուած։ Այս Գերազնայաւոր Ոյժին, կամ Աստուծոյ հետ յարաբերութիւնը կը կոչուի կրօնք։

Աստուած կը կազմէ մեր միջավայրը, մեր մթնոլորտը, որուն մէջ կը խորհինք, կ'զգանք, կը շարժինք, կը շնչենք թէպէտ յաճախ անգիտակից՝ անոր գոյութեան, ինչպէս որ յաճախ անգիտակից կը գըտնուինք մեր թոքերը լեցնող և շուրջը պատող օդի գոյութեան։ Մարդ

չի կրնար Ապուծմէ խոյս տալ ինչպէս որ մարդուն մարմինը չի կրնար երկրիս մթնոլորտէն դուրս գալ, բայց կրնայ յանդգնիլ Անոր հակառակելու կամ զԱյն անգիտանալ։ Եթէ երբեք մարդիկ փզնիւ խորհուրդներ, զուրբ տեսիլքներ, նոր յայտնութիւններ, մտքի և սրտի մեծ յղացումներ ունեցած են, ասիկայ կարելի եղած է սա պատճառով որ այս Գերազնայաւոր Ոյժը տակաւին մեզի անծանօթ և խորհրդաւոր կերպերով մարդ անձնաւորութիւնը գրգռած, անոր մէջի կայծը հրպարած է՝ իր իսկ էութենէն խորհրդաւոր ինչ մը անոր հաղորդելով, ներշնչելով։

Բոլոր մեծ հոգիները գիտակից կ'ըլլան այս յարաբերութեան, որ կրնայ զարգանալ և զօրանալ երբ անոր համար նպաստաւոր պայմաններ միշտ պատրաստուած ըլլան։ Բոլոր այլադաս կրօնական մեծ դէմքերը այս կամ այն կերպով, ձեռով և չափով իրենց կեանքին և խօսքերուն մէջ կը ցոլացնեն այս յարաբերութենէն բխող կայծը։ Կոմիւնիկիստն ու Լատցըն, Պուտտան և Զրադաշտը, Մուհամմէտն ու Ճէլալէտտին Րումին, Սոկրատես ու Պլատոնը աստուածային հուրի մը ներգործումը կ'զգային իրենց հոգիներուն

մէջ, և այդ լոյսը կը ցոլացնէին իրենց կեանքովը առաւել կամ նուազ երկար շրջանի մը մէջ, առաւել կամ նուազ փայլունութեամբ և որոշ զոյնով մը: Այո՛, անոնք ևս ունէին ճշմարիտ հոգեւոր փորձառութիւն մը, որ արհամարհելի ըլլալէ շատ հեռու է:

Այս ոչ-քրիստոնեայ հոգեւոր փորձառութեան տէր անհատներն երբեմն այնպիսի ազնիւ նկարագիրներ կը ցուցնեն որ ամէնուն հիացում կը պատճառեն: Ասոնցմէ մէկն է Կանտին, որ այսօր բովանդակ աշխարհի կողմէ ամէն կրօնք, ամէն ցեղէ մարդերու կողմէ, իր թշնամիներուն և բարեկամներուն կողմէ կ'ընդունուի իբր մեծ հոգի մը, ազնիւ նկարագիր մը, սուրբ, նուիրեալ և սիրով լեցուն կեանք մը: Այսպիսի ոչ-քրիստոնեայ հոգեւորները ամօթի կը մատենեն քրիստոնեայ աշխարհին մէկ մեծ մասը: Ահա հոս կը ծագի «ա հարցը թէ ի՞նչ է քրիստոնէութեան առաւելութիւնը կամ տարբերութիւնը ուրիշ կրօնքներէն, երբ ոչ-քրիստոնեայ կրօնական փորձառութիւն ունեցողներ նոյնիսկ կրնան աւելի ազնիւ և բարձր կեանք մը ապրել քան շատ մը քրիստոնեաները:

Կրօնական կամ աւելի լաւ է ըսիլ հոգեւոր փորձառութիւնը բան մըն է իսկ քրիստոնէական փորձառութիւնը՝ տարբեր բան մը: Այս երկուքն իրարու նմանող կէտեր ունին, հետեւաբար ամէն կրօնքէ իսկապէս հոգեւոր մարդեր, մանաւանդ միսթիկներ, ունին հասարակաց գետին մը ուր կը միանան: Բայց նկատի առնուելիք կարեւոր կէտը այս երկու փորձառութիւններն իրարմէ բաժնող տարբերութիւններն է: Քրիստոնէական փորձառութիւնը կրօնական փորձառութեան հաւասար չէ երբեք:

Ինչ է այն գիծը որ քրիստոնեայ և

ոչ-քրիստոնեայ հոգեւորը իրարմէ կը զատէ: Ասիկա՝ մեր եկեղեցական կազմակերպութիւնները, արարողութիւնները, վարդապետութիւնները, եկեղեցական աւանդութիւններն ու սովորութիւնները չէ: Ասոնք փոփոխական են և պէտք է ըլլան, հոգ չէ թէ անոնք որքան նուիրական են մեզի համար: Այս բոլորը մարդկային են: Ասոնք այնքա՛ն արժէք ունին որքան որ օգտակար են քրիստոնէական հոգեւոր կեանքի զարգացումին: Ոչ քրիստոնեաները յաճախ մեզ կը դիտեն մեր այս մարդակերտ հաստատութեանց, զազաւտներուն, սովորութեանց լոյսին տակ և անոնցմէ անդին աստուածային բան մը չկարենալով գտնիլ կը դատապարտեն քրիստոնեայ աշխարհը: Քրիստոնեայի հոգեւոր փորձառութեան քաջամակ իւրայայտելի գիծն է Քրիստոսի գիտակցութիւնը: ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԱՅՆ Է ՈՐ ԻՐ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՍԸ ՈՒՆԻ: Հոգեւոր արժեքներու, մարդու, Աստուծոյ, կեանքի, եայլնի մասին կը խորհի և կ'ապրի Քրիստոսի պէս՝ գիտակից ըլլալով իր մէջ Անոր ներկայութեան: Քրիստոնեայ Պօղոսը Հրեայ Պողոսէն զանազանողն էր ճիշդ այս Քրիստոսը: Այնպէս որ ա՛յն ան ըսաւ, ոչ թէ ես այլ Քրիստոս իմ մէջս կ'ապրի:

Եթէ մեր անհատական և հաւաքական հոգեւոր կեանքին մէջ պէտքը կ'ըզդանք զօրանալու՝ ամէն բանէ առաջ և ամէն բանէ աւելի պէտք է մեր մէջ Քրիստոսն ունենանք: ԱՒՆԼԻ՛ ՔՐԻՍՏՈՍ. ահա այս պէտք է ըլլայ մեր նշանաբանը: Եւ բովանդակ քրիստոնեայ և ոչ քրիստոնեայ աշխարհը կը կարօտին Քրիստոսի, և ոչ՝ մարդկային մօքին եւ ձեռքին յղացումներուն:

ՔԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԿԱՆՏԻ

Քաղաքի ալ Կանտիի նման սեպ-
հակաճան ստացուածք չ'ուզեր ունենալ։
Իր գիրքերուն սպառումէն զոյսցած
մեծ գումարները ազտօր թաղերու
(slum) մէջ իր յառաջ տարած գործե-
րուն կը յաակացնէ։ . . . Երկուքն ալ
իրականօրէն Քրիստոսի նման կեան-
քեր կ'ապրին։ Երկուքն ալ իրենք զի-
րենք ազգասնեակներն բախտակից կ'ը-
նեն։ Երկուքն ալ բռնութենէ կը խոր-
շին և սիրով կը յաղթանակին։ Եր-
կուքն ալ կ'ամչցնեն Արեւմուտքը, որ
«Տէ՛ր, Տէ՛ր» կը կանչէ, բայց Անոր ը-
սածները չի կատարեր։

Բայց ակնարար տարբերութիւններ
ալ կան երկուքին միջև։ Կանտի ոչ-
գործակցութեան մեթոտով կը գործէ։
Քաղաքի ալ գործակցի կառավարու-
թեան, բանւորներու, Պաշտօնայական-
ներու հետ։ Անիկայ Կանտիի չափ զօ-
րաւոր կերպով կը դատապարտէ Արեւ-
մուտքի նիւթապաշտութիւնը, բայց
ան կ'ուզէ սորվիլ ինչ բարի բան որ Ա-
րեւմուտքը ունի։ Այս տարբերու-
թեան մեծ մասին պատճառը կրնայ ըլ-
լալ երկու երկիրներու պայմաններուն
իրարմէ տարբերութիւնը։ . . . Բայց ա-
մէնէն աւելի խորը կը գտնուի սա իրա-
կանութիւնը թէ Կանտի Հինտու մըն
է, իսկ Քաղաքի բառին ամենախորի-
մաստովը Քրիստոսեան մը։ Այս իրա-
կանութիւնը անկարելի է որ աչքէն վը-
րիպի։ Անիկայ գրուած է իր բոլոր
ճառագայթող զէմքին վրայ։ Անիկայ
երգի մը պէս կը թրթռայ իր ձայնին
մէջ, կը յայտնուի իր խոշորութիւնը որ
միշտ կ'ընդմիջէ իր խօսակցութիւնը
«Աւտուան ժամը երեքին ես այնքան
մեծ ուրախութիւն ունիմ» կ'ըսէ Քաղա-
քի ակնարկելով աղօթքի պահուն։ Կան-
տի իր Ժողովուրդին բեռերը իր վրան
առած է։ Անիկայ իր խաչը կը կրէ սի-

րով, բայց այդ շատ ծանր կը ճնշէ վը-
րան։ Քաղաքի ալ իր Ժողովուրդին
մեղքերը իր վրան կ'առնէ։ Բայց իրեն
հետ կը քալէ լուսափայլ ընկեր մը որ
ճամբան կը լուսաւորէ։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

1. Թէ՛ ազգերու և թէ՛ անհատներու
համար հոգեւոր դարգացումը առաջին
կարեւորութիւնն ունի։ Մեր նպատա-
կըն է այնպիսի կերպով մը գործել որ
բոլոր ազգերը, մերն ալ անոնց մէջ ըլ-
լալով, ճամբան, ճշմարտութիւնը և
Կեանքը գտնեն և Անոր հետեւին։

2. Թէ՛ հաւաքական և թէ՛ անհա-
տական հոգեւոր դարգացումին մէջ իբր
գլխաւոր ազդակ Յիսուս և Անոր հոգին
եզական նշանակութիւն ունին։

3. Յամառօրէն փափաքիլ և ջանալ՝
անհատի մը կամ ազգի մը մէջ գտնելու,
հասկնալու, և զօրացնելու այն տարրի-
քը՝ որոնք Աստուծոյ և ապրելու կեր-
պին մասին Յիսուսի պաշտօնարին հա-
մաձայն են։ Յիսուս եկաւ ամէն անհա-
տի և ամէն ցեղի հոգեւոր ժառանգը լը-
րացնելու և ոչ թէ կործանելու։

4. Հոգեւոր՝ դարգացումի իբր մի-
ջոց մը, և իբր Յիսուսի հետեւորդները
իրենց հասարակաց գործերուն մէջ քը-
րիստոնեաներու միջեւ գործակցութեան
իբր սկզբունք մը՝ անկեղծ ազօթքը գե-
րագոյն կարեւորութիւնն ունի։

5. Ամէն մարդու իր ինչքին մատա-
կարարը ըլլալու գաղափարը էականօ-
րէն շիտակ է։ Կեանքի և հարստու-
թեան անձնասիրական գործածումը սը-
խալ է։ Ինչ որ կ'ընենք և կը վատ-
նենք հասարակաց բարիքին հետ դրա-
կան յարաբերութիւն մը պէտք է ու-
նենայ։

ԲԱՐՈՋԻՉ ՄԸ ՈՐ ԶՈՒՋԵՐ ԽՕՍԻԼ ԲԱՅՑ . . .

Մէկը կը պատմէ հետեւեալը . —

Տր. Սմիթին կ'այցելեմ իր պաշտօնատունը կարեւոր ժողովի մը մէջ խօսելու հրաւիրելու համար զինքը : Իր քարտուղարուհին զիս կ'ընդունի և ապա Տր. Սմիթի կը յայտնէ իմ պաշտօն պատակը : Տր. Սմիթ սակայն զիս յուսախաբանութեան կը մատնէ Իբր կը պատասխանէ որ չեմք չի փափայ իր ճառ մը խօսիլ ունէ տեղ , ունէ մարդու մը կ'աւ օնէ մէկու համար» : Տր. Սմիթի մտնին կազմած գեղեցիկ զաղափարըս օտակալի հարցածի մը տակ կարծես փշրեցաւ :

Երկու ամիս հաջորդ կառավարութի մը մէջ սեւամորթ քարտզիչի մը հանդիպեցայ , որ ինծի իր կեանքի փորձառութիւնը պատմեց հետեւեալ կերպով :

Եւրո քարտզչական պաշտօնիս ձեռնարկեցի առաջին օրէն զօրծա սկսաւ անյաջող ընթացքով : Ատեն մը հաջորդ ամիսսնացայ , և կինս կրցաւ ժողովուրդին մէջ հռանդ յառաջ բերել : Կեանքը ինծի համար ո՛ւր յաջողութիւն մէջ : Բայց երկար չտեսայ : Երկու տարի հաջորդ կինս հիւանդացաւ և մի քանի օրուան մէջ մեռաւ : Յուսահատութիւնս վերջին տարիճանին հասաւ : Ամէն բան ինծի համար կործանած էր : Խորհեցայ որ եթէ կայ մարդ մը որ կրնայ ինծի օգնել , ինձմէ շատ հեռու հիւսիսը ապրող Տր. Սմիթն է : Դրամս խնայելով ճամբու ծախքս հայթայթեցի և Տր. Սմիթի քով գացի : Յայտնեցի թէ իր կինը կորսնցուցած սեւամորթ քարտզիչ մը կ'ուզէ իրեն հետ տեսակցիլ : Անմիջապէս զիս ընդունեց իր ներքին սենեակը , և չորս ժամ շարունակ ինծի հետ խօսակցեցաւ , առանց վայրկեան միտի նկատի առնելու իր ըրած նախկին ժամադրութիւնները , դուրսը իրեն սպասող մարդերը , իր

քարտուղարուհիին քանիցս գուռը բազխելը : Եւ այս միջոցին իմ հրկինքէս անհետ եղած բոլոր անողորմ մէկիկ մէկիկ դարձեալ իրենց տեղը դրաւ :

Այս պատմութիւնը լսելէ ետքը խորհեցայ որ տաղանդաւոր քարտզիչի համար թերեւս ասիկայ է քարտզչի փոխանակելու լաւագոյն մէկ կերպը :

ՄԱՐԴՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ

Ահա գիտական աշխարհի հանելուկներէն մէկը զոր լուծելու համար շատ մը գիտնականներ խուզարկութիւններ կատարած և տեսութիւններ , վարկածներ մէջտեղ դրած են : Կար ատեն մը երբ գիտնականները գտնել կարծեցին այս խորհուրդին բանալին : Բայց հիմա աւելի քան երբեք խնդրին լուծումէն իրենք զրկուեցան : Գիտնականները ստիպուած են միշտ իրենց գաղափարները սրբաբերելու եւ լրացնելու , նոր յայտնուած լոյսի , գիտական նոր ահագին պաշարի պատճառաւ : Առաջ կը խորհէին որ մարդ ուղղակի կապիկէ սերած է : Հիմա ասիկա անընդունելի կը գտնեն : Ներկայ մարդէն առաջ ապրող բոլոր վեց տեսակ մարդերու բերածոները գտած են : Աստիճաբար կը կոչուին նախամարդ : Գիտնականներու կարծիքին համեմատ նախամարդու ամենահին տեսակը ասկէ մէկ միլիոն տարի առաջ ապրած է : Դարձեալ գիտնականները կ'ընդունին թէ այս բերածոները գտնուած նախամարդուն ոչ մէկ տեսակը ներկայ մարդուն նախահայրն է : Ներկայ մարդուն և նախամարդուն միջև անանցանելի խրամատ մը կայ : Իսկ նախամարդուն և կապիկին մէջ նաեւ , կ'ըսեն գիտնականները , ահագին հեռաւորութիւն մը կայ : Կապիկը կապիկ միայն կրնայ արտադրել : Հին Գիրքը կ'ըսէ թէ Աստուած իր նմանութեամբը ստեղծեց մարդը :

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՆՈՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցիին տուն մէջ, ուր կը բնակին Մատթէոսի Աւետարանին 5-7 գլուխներուն մէջ նկարագրուած կեանքը ապրողները: Բրիստոսի եկեղեցին— Մատթ. 16. 18 կ'ըսէ «իմ եկեղեցի» — կ'ուզէ քրիստոնէական եկեղեցին հրէութենէ դանադանել: Եկեղեցին եղբայրութիւնն է այն մարդերու որոնք Աստուծոյ կողմանէ Ս. Հոգւոյն միջոցաւ բռնուած են և Աստուծոյ Թագաւորութեան սկզբունքներով կառավարուելու յօժար են:

Յիսուս՝ եկեղեցի բառը միայն երկու անգամ գործածեց. Մատթ. 16. 18. և 18. 17: Բնայց Առաքեալները յաճախ կը յիշեն դայն: Պետրոս և ուրիշ Առաքեալները եղբայրութիւն և եկեղեցի բառերը նոյն իմաստով կը գործածեն:

Նոր Կտակարանը եկեղեցիին ընկերային ծառայութիւնները շատ կը շեշտէ: Եկեղեցի մէջ աստուածաբանութիւն սորվելու տեղ մէջ, ո'չ ալ իմաստասիրութեան դպրոց մը: Անիկայ կը բռնակալան արարողութիւններ կատարելու տեղալ չէ. եկեղեցիին՝ սիրոյ կեանքը գրգռող, քաջալերող կրօնական պոէթիան մը, հաստատութիւն մէջ:

Տէր Յիսուսին քը կազմեց առաջին եկեղեցին, որուն մէջ իր նպատակն էր իր ընկերութեան գաղափարը իրականացնել և իր ընկերային յարաբերութիւններուն մարմին տալ և Առաջին եկեղեցիին կապառնայումի մէջ հաստատուեցաւ, և ապա ուրիշ տեղեր ալ կազմուեցաւ:

Եկեղեցիին գործն է Աստուծոյ Արքայութեան դառն մարդերու բանալ, բռնող ազգերը դաստիարակել, իրենց աղ և լոյս աշխարհի մէջ գործելով կեանքի ամէն շրջանակին թափանցել, արդար կեանքի չափանիշը որոշել, ճշմար-

տութեան ծառայել: Մատթ. 16. 16—19, 5. 13—14, 13. 33, Բ. Պետ. 2. 9:

Աստուծոյ Թագաւորութիւն և եկեղեցի բառերը նոյն իմաստ չեն: Առաջինը նշանակաւ՝ երկրորդը միջոց է: Եկեղեցի՝ Ս. Հոգիին ձեռքը գործիք մըն է մարդերու մէջ Աստուծոյ կանոնները հաստատ պահելու համար:

Սա հարցումը միշտ միտք կուզայ թէ եկեղեցին արդեօք իր պարտականութիւնը կատարած է անցեալին մէջ: Այո՛: Պատմութեան հարեւանցի մէկ սուսումնաւիրութիւնն իսկ կը ցուցնէ թէ քրիստոնէական կրօնքին ազդեցութիւնը որչա՛փ մեծ եղած է քաղաքակրթութեան վրայ: Անցեալ 2000 տարիներու միջոցին քրիստոնէութիւնը մեծ յաջողութիւն ունեցած է՝ ազգերու և անհատներու վրայ իր ներգործութեամբը:

Պէտք է խոստովանինք որ սկիզբէն մինչև վերջը քրիստոնէական եղաղ ոչ մէկ գործ եղած է: Այսուհանդերձ մեր յարաբերութեանց մեծ մասը քրիստոնէական կրօնքէն ազդուած է: Եւ այս պարագան մեր երջանկութեան պատճառ եղած է: Իսկ քրիստոնէական չեղող մեր յարաբերութիւնները մեր վիշտերուն պատճառը եղած են:

Բրիստոնէութիւնը՝ մինչև հիմա իր յարաբերութիւն ունեցած ամէն բան փոխած է: Եկեղեցիին՝ պատմութեան ամէն մէկ շրջանին՝ իր որբացուցիչ և մեծ ազդեցութիւնը ունեցած է հոգիներու, սկզբունքներու, սովորութիւններու, օրէնքներու, կառավարութեանց, դպրոցներու, փիլիսոփայութեան, գիտութեան, գրականութեան և արհեստներու վրայ:

Քրիստոնէութիւնը՝ հպարտութիւնը զսպած է, կարեկցութիւն յառաջ բերած, պատասխանատուութեան զգա-

ցումը ստեղծած, ազատութեան և արդարութեան տենչ յառաջ բերած է: Ներկայ մարդը իր արդի աստիճանին քրիստոնէութեան շնորհիւ հասած է:

Ներկայիս թէպէտ մտաւորական և հոգեւոր աւելի ոյժեր երևան գալով և կեղեցիկն առանձինն կատարած գործին մէջ անոր կ'աշխատակցին, և սակայն Եւրոպայի ամէնէն քիչ կրօնական եղող երկիրներուն մէջ իսկ կեղեցիկն է որ հանրային կարծիքին վրայ կ'ազդէ: Եթէ այսօր կեղեցիկն ընկերային յանցանքի մը հակառակելու ըլլայ՝ ուրիշ և ոչ մէկ ոյժ կրնայ անոր գոյութիւնը տեսականացնել: Մեր այս ըսածներուն ճշմարտութիւնը ցուցնելու համար կըրնանք յիշել հետեւեալները:

1. Եկեղեցին Եփս. 5. 27ին մէջ եղածին պէս «անարատ» եղած չէ. այսպէս ըլլալով հանդերձ ան իր բարոյական վերացումիւ ազդեցութեան տակ առած է թիւով իրմէ անհամեմատօրէն մեծ եղող աշխարհը: Անիկայ ամէն դարուն մէջ ժամանակի ոգիին իշխող բարոյական ազնուութիւն ցոյց տուած է:

Դ. դարուն մէջ աշխարհի վրայ վեց միլիոն էր քրիստոնեաներու թիւը, որ այդ դարու բոլոր բնակչութեան մէկ քըսաներորդին կը հաւասարէր, բայց իր դարուն վրայ մեծապէս ազդեց: Այսօր աշխարհիս բնակչութեան թիւը 1900 միլիոն է որուն 728 միլիոնը քրիստոնեայ է — 350 միլիոն կաթոլիկ, 158 միլիոն Օրթոտոքս, 220 միլիոն Բողոքական:

2. Ամէն դարու մէջ եկեղեցին է որ բոլոր մարդերու եղբայր ըլլալուն մեծագոյն և միակ վկան եղած է: Լուկիանոս քրիստոնեաներու իրարու հանդէպ ունեցած սէրին մասին վկայելով կ'ըսէ. «Անոնց Տէրը յաջողած է գանձաբաժնով համոզելու թէ անոնք իրարու եղբայրներ են»:

3. Բարեգործութեան, մարդասիր-

ութեան, ընկերային ծառայութեան մասին եկեղեցական տեղեկագրութիւնները շատ փայլուն են: Երուսաղէմի եկեղեցին հասարակաց սեպհականութեան սկզբունքը որդեգրեց և աղքատները խնամելու համար սարկաւազներ և սարկաւազուհիներ որոշեց: Հին վանքերու, միաբանութիւններու, Ֆրանչիսկեաններու և Ասպետներու բարեգործութիւնները անուրանալի են: Եկեղեցական Բարեկարգութիւնը թողրմութեան իմաստը փոխեց և պնդեց թէ թողրմութիւնը՝ զայն տուողին հոգին չի փրկիր բայց զայն ընդունողին բարիքին կը ծառայէ:

Կարօլոս Գոսկի, եկեղեցիի թշնամին, կ'ըսէ. «Եկեղեցին թէպէտ չկրնա աղքատութիւնը մէջտեղէն վերցնել, բայց իրեն կարելի սահմանին մէջ ընդհանուր աղքատութեան առաւապանքը ամօքելու մէջ ամէնէն ազդու կազմակերպութիւնը եղաւ»:

4. Եկեղեցին բարոյականի մասին բարձր գաղափարական մը տուաւ: Կիները այրերու հետ հաւասար գեանի վրայ զրաւ: Ընտանեկան կեանքը սերբադործեց և հաստատեց: Ծնողական իշխանութիւնը՝ ծնողական ծառայութեան փոխեց: Անբնական սեռային կիրքը դատապարտեց, զաւակներու լըքումը, արիւնոժ վրէժ լուծելը, գերութիւնը, պատերազմը ապօրինի հոչակեց:

5. Բոլոր պատմաբանները միաձայնութեամբ կ'ընդունին թէ Արեւմտեան քաղաքակրթութեան միակ ստեղծիչը եկեղեցին է: Այս իսկ պատճառով Արեւմտեան քաղաքակրթութիւնը կոչուի: Ե. դարէն մինչեւ Ը. դար, կը կոչուի միջոցին, երբ բարոյական փոթորիկի միջոցին, երբ բարոյական Տեստոն ցեղերը Հռովմէական կայսրութիւնը տապալեցին և բաժան բաժան ըրին, ժողովուրդին միակ յինա-

րանը եկեղեցին եղաւ :

Պապերը, եպիսկոպոսներն ու վան-
քերն էին որ մեռնելու վրայ եղող Յու-
նա—Հռովմէական քաղաքակրթութիւ-
նը վերջնական կորուստէ փրկեցին, և
այս մնացորդը իբր զարհրու ժառան-
գը փոխանցեցին այս նոր կազմուող
ազգերու :

Եկեղեցին էր որ անզուսպ բարբա-
րոս/արքաները և իշխանները օրէնքի
հետքերէն, աղքատները, կիներն ու
մանուկները պաշտպանեց : Վրիպոր է.
և իննասէնթ Գ. ի նման Պապի իրենց
կրօնի/թէ նկարագիրներովը զանոնքնը-
ւաճեցին : Ք. Ե. 800 թուականին Ծնուն-
դի օրը, Հռովմի Պապը Մեծն Կարթուսը
«Աստուծոյ ծառայ» կոչելով օծեց, անոր
զուլը թագ դրաւ և սորվեցուց թէ ինչ-
պէ՛ս պէտք էր արքայական իշխանու-
թիւնը գործածել :

6. Եկեղեցին ամէն դարու մէջ կըր-
թութեան մայրը եղած է : Յունա—Հռով-
մէական գրականութիւնը, փրկութիւն

յութիւնը, դպրոցները եկեղեցին պաշտ-
պանեց : Աստուծոյ վասն ներկայ համա-
լսարաններուն ծնունդ տուաւ : Եթէ
վանականներ, եկեղեցականներ չըլլային
բոլոր հին գիրքերը բնաջինջ կ'ըլլային :

7. Եկեղեցին ամէն դարու մէջ ընկե-
րային արդարութեան փոխարէն հան-
դիսացեր է : Միջին դարու մէջ անիկայ
կրօնական շարժումներու, անսեռական
ազգականերու և ընկերային պահանջնե-
րու հետ միասին քալած է :

Վալտերսկաններ, Լոլարսներ, Հուս
և հետեւորդները, Անապափաթներ և
Մաքրակրօններ էին որ ժողովրդապե-
տական կառավարութիւնը, կրօնաւս-
չութեան մէջ աշխարհականներու մի-
ջամտութիւնը, բանւոր դասակարգին
իրաւունքները յառաջ բերին : Քանզի
ասոնք յայտարարեցին թէ Աստուծո
երկրիս վրայ ալ իշխանութիւն ունի :
Եկեղեցական Բարեկարգութիւնը ընկե-
րային քրիստոնէութիւնը շեշտեց :

Զահէ

ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԹՈՎՄԱՍ ԱՆՎԱ ԷՏԻՍԸՆ

Բ.

ՀԱՍՐԻՉՆ ՈՒ ԲԱՆՈՒՈՐԸ

Էտիսընի անխոնջ և յարատեւ ջան-
քերուն շնորհիւ վերջին 52 տարուան
ընթացքին աշխարհիս բոլոր երկիրնե-
րուն ճարտարարուեստը ուժգին թափ
ստացաւ և աշխարհիս տնտեսական չա-
փանիշը խիստ բարձրացաւ :

Միացեալ Նահանգաց այս համաստ-
գաւակը յամառ աշխատող մը եղաւ,
ամբողջ կէս դար իր կեանքը քաշքշե-
լով աշխատանքներու մէջ : Սակայն
այդ կեանքը ապարդիւն չեղաւ : Իր ջան-
քերուն արդիւնքը ըլլալով անօթիներ
կշտացան, անգործներ գործ գտան և
հարուստներ աւելի հարստացան :

Իրաւ է թէ Էտիսըն բնագիտական
որեւէ օրէնք կամ վարկած չստեղծեց .
սակայն իր արժէքը հասարակ վիտնա-
կաններու արժէքէն աւելի վեր կը կա-
յանայ, որովհետեւ Էտիսըն իր ստեղծա-
գործ հանճարը և գիտնականի տաղան-
դը ի սպաս դրաւ մարդկութեան օգտին
համար՝ ստեղծելով ի՛նչ որ անհրաժեշտ
էր անոր անմիջական դարգացումին :

Էտիսըն իբրեւ հնարիչ ճանչնալու
համար գուցէ լաւագոյնը պիտի ըլլար
թուել իր 1500 է աւելի հնարքներէն
ամէնէն հանրածանօթները : Գնահա-
տել իր իսկական արժէքը մեր կարո-
ղութենէն վեր է, սակայն թողունք

որ իր գիտելիքը ճշգիւն այդ արժէքը և խօսին իրենց տեղծիչին մասին :

Էտիսըն կը խորհէր որ մարդիկ պէտք եղածէն աւելի կը քննանան թէ մտաւորապէս և թէ մարմնաւոր կերպով : Արթուրն մնալու համար մարդիկ առատ լոյսի պէտք ունին, բայց այդ առատ լոյսը քիչեր միայն կրնային տեսնել քարիւղի և մոմի գործածման օրերուն : Առատ լոյսի սը հոգը խիստ մտահոգութիւն պատճառեց իրեն : Երկար փորձարկութիւններէ և անքուն գիշերներ լուսցնելէ ետքը, փերջապէս 1879 ի հնարեց ելեկտրական լամպարը, և 1882 ին լուսաւորման շխտէմը, հանդիսանալով մեր փողոցներուն և տուններուն անդրանիկ լուսաւորիչը :

Ինքն էր որ փութացուց ելեկտրականութեան պայծառ արշալոյսը :

Բատիօն անպիտան գործիք մը պիտի ըլլար այսօր, եթէ երբեք 1879ին էտիսըն չհնարէր ձայնագիրը :

Ինքն էր որ առաջին անգամ հնարեց գրի մեքենան :

Այսօրուան խօսուն շարժապատկերը դարձեալ մեծ հնարիչին կը պատկին :

Հանրակառքը որ արդի քաղաքակրթութեան լաւագոյն նմուշներէն է եւ քաղաքներու զարդը՝ Էտիսընի ջանքերուն արդիւնքն է :

Միացեալ Նահանգաց ամէնէն ընդարձակ ծաւալ ունեցող ճարտարարուեստները ուղղակի և կամ մի քիչ բարեփոխութեամբ Էտիսընի գիտելիքուն վրայ հիմնուած են :

Գաղափար մը տալու համար թէ լնչ եղած է Էտիսընի գիտելիքուն ազդեցութիւնը տնտեսական կեանքի վրայ հոս յիշենք այն միլիոնաւոր տալէրներու գումարը որ ճարտարարուեստի տարբեր ճիւղերուն մէջ իբր գրամագլուխ կը ծառայէ :

6,500 Միլիոն հանրակառքերու

5,000 Միլիոն լուսաւորման

1,250 Միլիոն շարժապատկերի

1,000 Միլիոն հեռաձայնի

857 Միլիոն ելեկտրական տարբեր գործերու

350 Միլիոն հեռագրի

271 Միլիոն գաճի ճարտարարուեստի

109 Միլիոն ինքնաշարժերու

105 Միլիոն ձայնագրի

100 Միլիոն մօթորներու շինութեան

15 Միլիոն անթել հեռագրի

5 Միլիոն ելեկտրական բարդերու (storage batteries)

Ամերիկայի տարեկան 90 երկրորդ տուար եկամուտին 18 երկրորդն է Էտիսընի գիտելիքուն արդիւնքն է :

Աթուլիչորս տարեկան ծեղուին 150 տարի պիտի ապրէր եթէ միջին կերպով աշխատող մարդու մը չափ աշխատէր : Իր զբօսավայրը աշխատանքը եղաւ, ուր չափ անքուն գիշերներ անցուց : Անքնութիւնը և ծանր աշխատանքը իր մարմինը այնքան մաշեցուցած էին որ մահը տարին երեք տալ խաճ պիտի ըլլար մեղմէ մարդկութեան բարեբարը՝ եթէ Տիկ. Էտիսըն իր կանացի բացառիկ իմաստութեամբը չխնամէր զայն :

Էտիսընի կեանքի փիլիսոփայութիւնըն էր աշխատիլ, միշտ աշխատիլ. և երեւան բերել բնութեան գազանիքները մարդոց երջանկութեան համար :

Անոնք որ իրենց երիտասարդ տարիքին կ'ստիպուին գործի ասպարէզին մէջ նետուիլ ձեռնուռնայն, անոնց համար Էտիսընի կեանքը իբր տիպար կեանքի կրնայ ծառայել :

Ամերիկեան Գոյին
Հայկայ

Յ. ՄԱՐԿԵԱՆ

(Շարունակելի)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԴԵՐ ԽԱՂԱՑՈՂ ՄԵՆ
ԴԷՄՔԵՐ ԵՒ ԴԷՊՔԵՐ

6. ՊԱՐՍԿԱՑՈՑՆ ՄԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԵՒ ՔՍԵՐՔԱՆՍ

Քսերքսէս Ն. Ք. 480ին Իրանեան մեծագոր կայսրութեան գոռոզ արքայից արքան, որ 140 նահանգներու վրայ կ'իշխէր, ահարկու և ստուար բանակ մը շարժման գրաւ: Կարգ մը պատմաբաններու կարծիքին համեմատ այս բանակը կը բաղկանար 5 միլիոն զինուորական: Ուրիշներ կը պնդեն թէ երկուքուկէս միլիոն էր անոնց թիւը, բայց պատմագետներու մեծամասնութիւնը միաձայն կը յայտարարեն թէ առնուազն մէկ միլիոնէնոց բանակ մըն էր: Քսերքսէս այս բանակի վերին հրամանատարութիւնը ստանձնելով՝ զայն Վոսիւրէն անցուց, Յունական երկիրներու վրայ յարձակեցաւ, հրախառն Յունաստանի մէջ բաւական զաւառներ գրաւեց: Բայց Ապարթաղի անդեններ թագաւորը կէտնիտաս, Աթէնքի Թեմիսդոկէս ու Արիստիդէսը ու անոնց նման ռազմագէտ զօրավարներ եւ ծովակալներ իրենց փոքրիկ բայց զիւցազն բանակներովը Քսերքսէսի անհամար զօրքերուն վրայ յաղթանակ տարին, և Դարիհի հրպարտ որդին ստիպուեցաւ նահանջել և փախչիլ: Եթէ այն մեծահամբաւ Դարիհը և անոր որդին յաղթութիւնը շահած ըլլային, գիւրին է գուշակել թէ ո՛ւր պիտի մնար Հելլենական քաղաքակրթութիւնը, ի՞նչ ձեւ պիտի առնէր Եւրոպայի քարտէսը և ի՞նչ աստիճանի վրայ պիտի մնար Եւրոպական քաղաքակրթութիւնը:

7. ՄԵՄԵՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՒ ԻՐ ՄԱՀԸ

Ն. Ք. 334, Մակեդոնիայի փոքրիկ տէրութեան գահուն վրայ բազմող տասնութամեայ երիտասարդ Աղեքսան-

դըր՝ Հելլենական մարդը թերակզիին իւրացնելէ յետոյ, Մակեդոնական քաջ և կրթեալ բանակ մը պատրաստելով 140 նահանգներու վրայ տիրող իրանեան կայսրութեան դէմ պատերազմ հրատարակեց: Պոլսոյ նեղուցը անցաւ, և Կրոնիքոսի, Իսոսի և Արպելայի երեք ճակատամարտներուն մէջ կատարեալ և վճռական յաղթանակներ տանելով ամբողջ Պարսկաստանի տէր և իշխան դարձաւ: Ան չբաւականացաւ այս յաղթութիւններով, և Պարսկական իշխանութեանց սահմանը անցնելով յառաջագաւ զէպի Արեւելք և հասաւ մինչեւ Հընդկաստանի ինտոս գետը, և եղաւ միահեծան թագաւորը բազմաթիւ երկիրներու որոնք կը տարածուէին Դանուբի գետեկերքէն մինչեւ Եթովպիոյ կէտները և Ադրիական ծովէն մինչեւ Ինդոսի ափերը:

Իր 11 տարիներու փառաւոր յաղթութիւններէն վերադարձաւ և եկաւ Բաբելոն հանգչելու և զայն իր անհուն թագաւորութեան մայրաքաղաք ընելու և հոն պատրաստելու իր ապագայ աշխարհակալութիւններու ծրագիրը: Իր առաջին գիտաւորութիւնն էր Հռովմի վրայ արշաւանք մը ընել և Իտալական երկիրները կցել իր փառապանծ կայսրութեան: Բայց չկրցաւ իրագործել իր ծրագիրները, քանզի Բաբելոնի մէջ հիւանդացաւ և հազիւ իր 32րջ տարիքին նոր թեւակոխած էր երբ իր մահկանացուն կնքեց և իր բոլոր խուհուրդներն յօգս ցնդեցան:

Մեծն Աղեքսանդրի պատերազմները, յաղթութիւնները աշխարհիս օգտակար եղան, քանզի Հելլենական բարբառը, այն ճոխ և սիրուն լեզուն, Փոքր Ասիոյ, Սիւրիոյ, Պաղեստինի, Միջագետքի, Եգիպտոսի և շրջակայ եր-

ՄԻՍԻՍ ԹՈՎՄԱՍ Տ. ԲՐԻՍԹԻ

Միսիս Բրիսթի իր տունը մեռած է Հոկտեմբեր 17ին, շաբաթ օրը, Գալիֆորնիոյ Փասսատինա քաղաքը:

Չեմ գիտեր թէ այս ազնիւ կինը որչա՛փ ծանօթ և սիրելի է Ամերիկեան ժողովուրդին, քանզի ան իր կեանքին 46 զարեօն տարիները Թուրքիոյ մէջ տնտես, Բայցան կիլիկիոյ բոլոր յայտնի քաղաքներուն մէջ ճանչցուած է, մանաւանդ կիլիկիոյ նշանաւոր քաղաքին՝ Տարսնի՝ աւելի քան 3000 Հայերու բոլորը անձամբ զայն կը ճանչնան և կը սիրեն. և անոնք կը վկայեն թէ Տիկ. Բրիսթի շատ մը մութ օրերուն մէջ իրենց համար պաշտպան հրեշտակի դերը կատարած է: Տր. և Միսիս Բրիսթի արդարօրէն Հայոց բարեկամ անունը շահած են:

Տր. և Միսիս Բրիսթի իբր Պորտի միոյննարներ 1874 ին Մարաշ եկան, ուր 20 տարի գործելէ ետքը, 1894 ին Պոր-

կիրներու մէջ տարածուեցաւ: Հարաւային Եւրոպայէն մինչեւ Հնդկաստան վաճառականութեան ճամբաներ բացուեցան և միջազգային առևտուրը ընդարձակուեցաւ, և Հիլլենական քաղաքակրթութիւնը ընդարձակօրէն ծաւալեցաւ: «Հելլէնի և Բարբարոսի» խտիրը չափով մը տկարացաւ և Երկնաւոր Թագաւորութեան գալուն համար ճամբայ պատրաստուեցաւ:

Փիլիպպոս Բ. ի այս մեծատաղանդ որդւոյն վաղահաս մահն ալ Հռովմէական և Եւրոպական քաղաքակրթութիւնը մեծ ազդեաներէ փրկեց:

Թագաւորներու սիրտերը Աստուծոյ ձեռքին մէջ ջուրի բաժանումներու պէս են:

Հայկայ

Կ. ԳՈՒՆՏԱՂԺՅԱՆ

Շաբունակելի

տէն կը զատուին և իբր Սէնթ Փոլ'զ Գոլէճի բացարձակ հեղինակութեամբ օժտուած նախագահը Տարսոն կուգան: Հոս 26 տարի մնացին: Գոլէճը թէպէտ խնամակալ մարմին մ'ունէր Ամերիկայի մէջ, և սակայն Տարսոնի մէջ վարչութիւն մը կամ նման մարմին մը գոյութիւն չունէր որուն նախագահը պատասխանատու գտնուէր: Ուսուցչական մարմին մը թէպէտ գոյութիւն ունէր և երբեմն ալ խորհրդակցութեան համար թէպէտ ժողովի կը նստէր, բայց պէտք է խոստովանիլ թէ Տր. և Միսիս Բրիսթի ամէն բանի մէջ ամէն բան էին:

Տր. Բրիսթի իր ուսումովն ու կարողութեամբը նախագահութեան արժանի էր, բայց բացարձակ իշխանութենէ կ'ախորժէր: Միսիս Բրիսթի զըպրոցի և նախագահի միջև կենալով երկու կողմն ալ սիրած և երկու կողմերուն ալ վրան ազդեցութիւն բանեցնող ամէնէն օգտակար միջնորդի մը դերը կատարած է: Ժիշդ այս պատճառով զըպրոցի գործերուն մէջ Միսիս Բրիսթի ազդեցութիւնը և ծառայութիւնը օգտակար և բարի եղած է:

Միսիս Բրիսթի՝ Տր. Բրիսթի յաճախակի բացակայութիւններուն առթիւ իբր փոխ նախագահ լաւ կերպով զպրոցը կը կառավարէր:

Միսիս Բրիսթի կը սիրէր ամէն դասակարգէ մարդերը հիւրասիրել և մանաւանդ շատ լաւ գիտէր կարօտներու օգնելու պարտականութիւնը: Երբ կը տեսներ թէ աշակերտ մը պէտք եղած հագուստէ զուրկ ըլլալուն համար ցուրտէ կը տառապէր՝ անպատճառ հագնելիք բան մը կը հայթայթէր անոր:

Հանգուցեալ այս ազնիւ կինը գիշերցերիկ կը հսկէր աշակերտներուն վրայ: Պաղ օրերուն աշակերտները երբ կ'ստիպ-

ուէին դաս սորվելու համար կանուխ արթննալ, գոնէ կազի վառարան մը վառելով անմիջապէս անոնց կը տանէր: Մանաւանդ հիւանդ աշակերտներուն բժշկական եւ դեղի վերաբերեալ պէտքերուն հոգ կը տանէր, անոնց անկողիններուն եւ կերակուրներուն ուշադրութիւն կ'ընէր մօր մը յատուկ կարեկցութեամբ, եւ այսպիսի գործերու համար որոշուած աշակերտներու խիստ հրամաններ կուտար:

Միսիս Բրիսթիլի ամէնէն աւելի յիշատակութեան արժանի եւ գովելի արարքն եղաւ 1909ի Ջարդի միջոցին հազարաւոր Հայերու հանդէպ կարեկցութիւն եւ գթասէր հոգի ցուցնելը:

Այդ դառնաղէտ դէպքին ամենատակալի օրը, եւ Տր. Բրիսթիլի աւբացականութեան, առանց իր ընելիքին մասին շուարեղու դպրոցական շէնքերուն եւ իր բնակարանին դուռերը բացաւ դետի մը նման վաղող հազարաւոր մարդերու հոսանքին առջեւ: Եթէ այն օրը՝ ըլլայ փոքր չափով՝ վախկոտութիւն մը եւ կծծութիւն մը ցուցնէր, շատերը իրենց կեանքէն պիտի յուսահատէին եւ դուրսը մնացողներէն շատերը պիտի Ջարդուէին:

Պատերազմի եւ տարագրութեան միջոցին ալ Միսիս Բրիսթիլ բաղմազան եւ յայտնի ծառայութիւններ մատուցած է մեր ազգին: Տարագրուածներու գոյքերը պահած, իրենց դրամները հետերին տանելու վախցողներուն՝ իրենց տեղը հասնելէն ետքը դրամին ղրկած, դրամ չունենալուն համար յուսահատածներուն եւ վշտաբեկներուն 5—10 օր բուսելու չափ դրամ տալով անոնց տառապանքը ամոքած է: Ուրիշ քաղաքներէ փախչելով կերպով մը իր տունը եկած փախստականներուն ապաւէն մը եղած է, եւ երբ կառավարութեան հրամանով փախստականները իր տունէն հանելու ստիպուեցաւ անոնց

պաշտպանութեան համար ուղղակի կամ անուղղակի կերպով միջոց մը գտնել աշխատած է:

Միսիս Բրիսթիլի կատարած գործերէն ոմանք այնպիսի գործեր են, զոր կատարելու մէջ թէ տկար նկատուող կին մը այլ նոյնիսկ չառ մը քաջ այրի անկարողութիւն կը ցուցնեն: Միսիս Բրիսթիլ, սակայն, այս բոլորը կը կատարէր առանց աղմուկի, առանց ցոյց իր թէ անոնք բնական եւ սովորական բաներ ըլլային: Արդ՝ թէպէտ Միսիս Բրիսթիլ մեռաւ, բայց տակաւին կ'ապրի եւ կը խօսի իր բարի գործերովը:

Տիֆայթը

Հ. ԿԵՕՎԳԱԼԱՅՃԵԱՆ

ՇԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆՕՔԵՐ

Երկու հազար թաք խորնկութեամբ գետնին ներսը թափանցող գործիք մը հնարած է գիտնական մը: Այս գործիքը հիւկտրականութեամբ կը գործէ եւ կը գործածուի գետնին տակը ամբարուած հանքերուն տեղը որոշելու:

Տեսակ մը անդր-մանիշակային (ultra violet) ապակի կայ թր երբ շատ գործածուի իր այս յատկութիւնը կը կորսնցնէ: Բայց վերջերս գտնուեցաւ որ երբ այս ապակին 500 սանթիկրատ ստիճան տաքութեան ենթարկուի իր նոյն անդր — մանիշակագոյն յատկութիւնը կ'ստանայ:

Պաղեստինի մէջ վերջերս կատարուած պեղումներէն նշանակելի է Կապա քաղաքէն երեւան ելած՝ աւերակները: Այս քաղաքը Ն. Ք. 2000 տարի քաղաքակրթական բարգաւաճ վիճակ մը ունեցած է: Կանոնացի կոչուած ցեղին քաղաքակրթութեան վերաբերեալ շատ մը հետքեր գտնուած են: Այս այն քաղաքն է ուր Սամսոն իր թշնամիներուն դէմ կռուելով յաղթեց:

Աւստրիացի գիտնական մը մասնաւոր տարբերէ կազմուած լուցկի մը հընարած է որ կրնայ 600 անգամ վառիլ:

Անգլիացի գիտուն մը նայնպէս գաւառական քրիստական նիւթերէ կազմուած լուցկի մը հնարեց որ 2000 անգամ կըրնայ վառիլ:

Շուեդացի քիմիաբան մը կուպրի վըրայ մեղմ փոսփորային թթու աւելցընելով կըրցաւ անկիղելի նիւթեր պատրաստել:

Տեսակ մը կղպանք պատրաստուած է որ երբ բանալիով մը բացուի իր բացուած ժամանակը կ'որոշէ:

Վէնասուած նաւ մը չընկղմելու համար ծակուած խոռոչին մէջ սառոյց կը դնեն որը կ'արգիլէ ջուրին ներս խուժումը:

Գերմանիոյ մէջ հսկայ օդանաւ մը կը շինուի որ 1000 մարդ պիտի կրնայ տանիլ իրենց գոյքերով:

Ճամբորդներ որոնք չոգ ենաւով Անգլիական Ափրիկէն կը հասնին՝ փոխանակ մակոյկներով ցամաք ելլելու մեծ կողովի մը մէջ կը դրուին և շոգ ենաւէն ցամաք կը հանուին:

Իտալիա՝ անմահ հայրենասէր Կարլպալտին յիշատակին համար տան մը մեծութիւնը ունեցող արձան մը կը կանգնէ Հռոմի մէջ:

Ձէնք մը հնարուեցաւ որ չորս հրացաններէ կը բաղկանայ և որ մէկ երկվայրկեանի մէջ կէս մատնաչափ մեծութեամբ 2400 գնդակ կ'արձակէ:

Բատիմյի նման և անոր հանգամանքները պարունակող մեքենայ մը շինուեցաւ որով գրաւոր գաղտնի յիշատակագիրներ (documents)՝ որոնք կը պարունակեն ծածուկ ծրագիրներ՝ կրնան ապահով կերպով զրկուիլ տեղէ տեղ: Հա-

ղորդիչ մեքենան կը տարբաղադրէ (decompose) յիշատակագիրին պատկերը իսկ ընդունող մեքենան զայն կը վերակազմէ:

Ոստիկանութեան գործածութեան համար մօթօսայքներու վրայ բատիոններ կը տեղաւորեն, որոնք արշ կայաբանի մը կապուած են և նոյնիսկ կրնան գործել երբ մօթօրսայքը արագօրէն կ'ընթանայ:

Անգլիոյ մէջ նոր օթօ մը կը շինուի որ գրեթէ ամբողջովին ձգախէժէ կը բաղկանայ:

Հարաւային Ամերիկայի գետի մը յատակէն թաղուած հսկայ անասունի մը բրածոն գտնուեցաւ: Անոր մեծութիւնը կը գերազանցէ ներկայիս ապրող նոյնիսկ ամենամեծ կենդանին: Շատ մը գիտուններու կարծիքին համեմատ այս կենդանին յիսուն հազար միլիոն տարի առաջ ապրած է:

Քաղեց՝ ՀԱՅԿ ՓՈԼԱՏԵԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ

ՏԵՐ—ՁՐԻ մէջ՝ Աղեքսանդրիա բընակող Տիար Բարսեղ Պալըզճեանի բարերարութեամբ Ս. Հովփսիմէ Եկեղեցիին և Ազգային Նահատակաց Վարժարանին շինութիւնները աւարտած են: Օծման և բացման հանդէսին բար Պալըզճեան ներկայ պիտի գտնուի Արտաւազդ Սրբազանի հրաւերով:

ՆՈՅ. 22 Ին Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ նազարէթ Ապահունիի իբր քահանայ ձեռնադրութեան և օծման հանդէսը, և կոչուած է Տ. Եզնիկ, որ պիտի հովուէ Ռիհանիյէ, Հայոշէն և Նոր Մարաշ գիւղերու ժողովուրդը:

ԳՐԸԳԻՍԱՆԻ Հայ Աւետ. Եկեղեցիին նորոգութեան համար, 120 օսմ. օսկի յատկացուած էր, ինչպէս որ գրած է թնք Կը տեղեկանանք որ անոր մօտ 100 օսկին, 436 տոլար, Փափագեան ֆոնաւէն տրուածը: Նոյն ֆոնտի եկամուտէն 66 տոլար ևս յատկացուած է Դատարանի եկեղեցիին:

ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹԻ Հայ Աւետ. Եկեղեցիին քարոզիչը Տիար Կ. Դրոյեաշարեան երկամասն քի հիւանդութեամբ կը տառապի և անկարող կը գտնուի իր պաշտօնը կատարելու: Վեր. Յարութիւնեան ժամանակուայ մը համար գործելու համար Ալէքսանտրէթ մեկնած է:

ՏՈՒԹ. Ա. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ որ ամիսներէ ի վեր Եւրոպա կը գտնուէր, Դեկ. ի սկիզբը քաղաքս վերադարձաւ:

ՂԱԶԻՐԻ մէջ, Պէյրութի մօտ, Զուլիքեան կոյրերու վարժարան մը կայ, ուր 105 աշակերդ հայեր կը սորվին արհեստներ, երաժշտութիւն և կը հետեւին այլևայլ ուսումներու:

Վարժարանիս աշակերտներէն խումբ մը Հալէպ գալով յաջորդաբար երեք անգամ Դեկ. 7, 8, 9 ի իրիկունները քէմրի մօտ Լիկայի շէնքին մէջ, Երիցական եկեղեցիին և էմմանուէլ Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ ճոխ յայտագրով նուազագոյն դէտներ տուաւ: Հինգ աշակերդ երիտասարդներ շութակի վրայ դասական կտորներ նուագելին մեծ յաջողութեամբ և Օր. Ֆ. Համամեան, հայկական երգեր երգեց իր լաւ կրթութեամբ և անուշ ձայնովը յուզելով և գրաւելով ներկաներու սիրտերը: Այս հանդէսներու մասնակցիլ բարեգործական պարտականութիւն մը և հոգեկան վերացուցիչ վայելք մըն էր միանգամայն:

Գ. ՀԱՅ ԱՌԵՏ. ԵԿԵՂԵՑԻ ԿԵԱՆՔԸ. Հալէպի մէջ, Նոյ. 18ին, Գ. Աւետ, Ե-

կեղեցիի խառն ժողովը ընդունելութեան հանդէս մը սարքեց Երիցական եկեղեցիի դպրոցասրահին մէջ: Ներկայ էին էմմանուէլ և Բեթել Հայ Աւետ. Եկեղեցիներու խառն ժողովներուն անդամները իրենց տրիկոններով, Երիցական եկեղեցիի հովիւը Ապտուլ Քէրիմ Գուլի, Ամերիկեան Պաշտի միսիոնարներէն Մր. Հ. Րիկզ, Մր. Քարլթըն, Միս Սիլիմըն և Միս Օլիֆինդ, Վեր. և Տիկ. Կ. Յարութիւնեան, Վեր. Ա. և Տիկ. Շիրաճեան և Գ. եկեղեցիին ժողովուրդին ստուար մէկ մասը: Բեթել Հայ Աւետ. եկեղեցիին հովիւը Վեր. Կ. Քէթէճեանի ազօթքէն հտքը Տիար Տ. Զ. Պրոքեան, որ յայտագիրը կը վարէր, հանդիսականներուն ներկայացուց նորակազմ եկեղեցին, և անոր նոր հովիւը՝ Պատ. Յ. Զագմագճեանը: Ապա կարգով խօսեցան Վեր. Ս. Ս. Մանուկեան, էմմանուէլ եկեղեցիի առժամեայ հովիւը, Մր. Քարլթըն Պօյկ Հայ Սքուլի փոխտնօրէնը, Պատ. Յ. Զագմագճեան և Վեր. Հ. Հ. Րիկզ: Սա վերջինը յայտնեց թէ «այսօր գահաբանութեան օր մ'է: Այսօր ուրախ ենք տեսնելով որ զաւակ մը իր ծնողքէն զատուած նոր տուն մը կը շինէ իրեն համար՝ վստահելով Աստուծոյ և իր վրայ: Ամերիկայի մէջ սոյնորութիւն է որ երբ երիտասարդ մը ամուսնանայ նախ իրեն համար տուն մը կը պատրաստէ և ապա իր ծնողներէն զատուելով իր նոր բոյնը կը հաստատուի: Եւ շատ անգամ կրնայ պատահիլ որ զաւակին տունը հայրենական տունէն աւելի ճոխ և ընդարձակ ըլլայ»: Նորակազմ եկեղեցին և ապա անոր նոր հովիւը շնորհաւորելէ հտքը այս երկուքին փոխյարաբերութիւնը բացատրեց սապէս: «Հովիւ մը երազէն մէջ կառք մը կը քշէր, և անոր ժողովուրդէն մարդիկ գայն հտեւէն կը հրէին: Բիշ ետքը, սակայն, հովիւը՝ հակառակ իր բոլոր ճիգերուն չկրցաւ թիզ մ'իսկ աւելի

քաշել կառքը, և ուժասպառ կեցաւ: Բայց ետեւը դառնալով տեսաւ որ իր մարդերը կառքին մէջ լեցուած են, ճամբան յոգնողը անոր մէջ նստած էր: Դուք, ըսաւ վեր. Բիկզ՝ ուղղելով իր խօսքը Գ. Եկեղեցիին, առանձին մի՛ ձգէք ձեր հովիւը իր կառքը քաշելու ատեն, հակառակ պարագային կառքը դատապարտուած է անշարժութեան»:

Տիար Լ. Լեւոնեանի ղեկավարութեամբ երգիչ խումբը ընդմիջաբար երգեց յարմար երգեր. և հանդիսականները մեծարժեքան անուշիկելով և պանանով: Այս պահուն հանդէսին նախագահը Պատ. Չազմադեանի մէկիկ մէկիկ ներկայացուց ներկաները և ապա «եղբայր ենք մենք» ը յառնկայս երգելէ ետք վեր. Բիկզի օրհնութեամբը ժողովուրդը բաժնուեցաւ սրահէն:

ՏՈՔԹՈՐ ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՅԱՆ, Դեկտեմբեր 8ի առաւօտուն իր բնակարանը յանկարծամահ կ'ըլլայ իր 49 տարիքին մէջ: Յուդարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ էմմանուէլ եկեղեցիին սրահը վեր. Ս. Ս. Մանուկեանի և վեր. Կ. Քէթէնեանի կողմէ: Հանգուցեալը բնիկ Այնթապցի, Կ. թ. Գոլէճէն և Պէյրութի Ամերիկեան Համալսարանի բժշկական ճիւղէն ուսումնաւարտ էր. կարճատեանէ մ'ըվեր Հալէպ հաստատուած էր և թէպէտ ամառը՝ ա'լ կը ծրագրէր ընտանեկան երջանիկ բոյն մը կերտել:

ՀԱԼԷՊԻ Ազիզիէ թաղին մէջ Ս. Բ. Մանկանց եկեղեցիի եւ «Հալէվիէ Մէտրէսէ»ի պատկանող գետինը ժամանակին կառավարութիւնէն գրաւուած և վրան չէնք և պարտէզ շինուած էր: Տիար Պետրոս Միլէթպաշեանի փոխանորդութեամբ Առաջնորդաբանի երկք տարի առաջ բացած դատը ազգին նպաստաւոր կերպով վերջացած է: 4553 օսմ. ոսկի արժէք գնահատուած է:

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Նորընտիր Պատրիարքը Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեան Գահիրէէն դէպի Երուսաղէմ մէկնումին և ճամբորդութեան միջոցին ժողովուրդային համակրալիւ մեծ ցոյցի առարկայ եղած է: Կառավարական և եկեղեցական պաշտօնական շատ մը անձեր իրեն ողջերթի զացած են Գահիրէի մէջ և Երուսաղէմի մէջ փառաւոր թափօրով մը Ս. Յակոբի Մայր Տաճարը առաջնորդուած է: Դեկ. 1 ի առաւօտուն Պաղեստինի Բ. Գոմիսէրի պալատին մէջ ընտրութիւնը վաւերացնող կայսերական հրովարտակը կարդացուած և ապա Ս. Պատրիարք հօր յանձնուած է: Կէսօրէ ետքը Ս. Յակոբի տաճարին մէջ գահակալութեան շէնք հանդէսը կատարուած է, և ապա պատրիարքարանի մէջ կղերական և պետական բարձր պաշտօնատարներու և հիւպատոսներու շնորհաւորութիւնները ընդունուած են:

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ»-ի աշխատակիցներէն Պատ. Գ. Տէմիրճեան (Քոքինիա փրէ) կը գրէ Նոյ. 14 թուակիրով:

Սեպտեմբերին մեր վարժարանը վերսկսած ենք Պատ. Մ. Բէնճիլեանի տնօրէնութեամբ, տասը ուսուցիչներու պաշտօնավարութեամբ և ցարդ կարողացած ենք արձանագրել՝ 230 երկսեռ աշակերտութիւն մը: Սեպ. 30ին մեր վարժարանը այցելեց Պոլսոյ նախկին Պատրիարք, Զաւէն Սրբազանը և գնահատական խօսքեր ըրաւ կրթական գետնի վրայ տարուած խիստ գովելի աշխատանքին համար:

Այս տարի մեծ եռանդով և ոգեւորութեամբ մը գործի սկսաւ Քոքինիոյ Բ. Զանից Միւսթիւնը: Սոյն ընկերակցութիւնը ձեռնարկեց պարբերաբար լսելիական հանդէսներ սարքել:

ճոխացուց իր գրադարանը 350 հատոր
գիրքերու յաւելումով, բացաւ կահա-
ւորուած ընթերցասրահ մը մօտ 750 հա-
տոր գիրքեր պարունակող իր գրադա-
րանին յարակից, և հայթայթեց կարգ
մը ընկերային խաղեր ձմեռուան եղա-
նակին՝ երիտասարդներու գրօսման
համար: Հոկ. 25 ին Քոքինիոյ Բ. Ջա-
նից Ընկերութիւնը՝ Միութեան յիշմա-
հայ յորեկեանը տօնեց մեծ շուքով և
հանգիստութեամբ: Յոբելիանական հան-
դէսը բացաւ Ընկերութեան նախագահ,
Պատ. Մ. Բէնճիկեան, տալով նոյն ա-
տեն կարգ մը հակիրճ տեղեկութիւններ
միջազգային ընդհանուր Բ. Ջանից Մի-
ութեան ինչպէս նաև Քոքինիոյ մաս-
նաճիւղին գործունէութեանց նկատ-
մամբ: Գեղարուեստական ճոխ բաժի-
նէ մը յետոյ, աւուր պատշաճի բանա-
խօսութիւններ ըրին Տոքթ. Ծ. Բ.
Մարտին և Վեր. Կ. Սթամպուլեան:

Նոյ. 7ին գոնֆէրանս մը տեղի ունե-
ցաւ Քոքինիոյ Հայ Աւետարանական Ե-
կեղեցւոյ մէջ, շրջանիս բոլոր քրիստոն-
եայ գործիչներուն համար, և սոյն
գոնֆէրանսին խիստ հրահանգիչ դա-
սախօսութիւն մը ըրաւ Փրոֆ. Ծորձ
Միխայէլիտիս՝ նիւթ ունենալով «Ման-
կան Կարեւորութիւնը»:

Յիշատակութեան արժանի կէտ մըն
է նաև Դանիական Միսիոնի առաքե-
լուհիներուն, Օր. Եէնսընի, Օր. Մէյ-
րիի և իրենց օգնական Օր. Աստղիկ
Սէմէրճեանի լռիկ և սակայն ազդեա-
ւաշխատանքները մեր գաղթականնե-
րուն մէջ: Յիշեալ առաքելուհիները
պարզապէս պահպան հրեշտակներու
գերը կը կատարեն մեր տարաբախտ
ժողովուրդին մէջ: Վերջերս Քօրֆու-
յէն քաղաքս փոխադրուեցաւ և Քոքի-
նոյի մէջ հաստատուեցաւ Անգլիական
Բարեկամաց Հայանպաստ Միսիոնը:
Սոյն հաստատութեան պաշտօնական
բացումը կատարուեցաւ Նոյ. 8ին, նախ

խօսեցան Միսիոնի վարիչը, Միս Պըր-
ճըս և Վեր. Զէճիզեան, ապա կարգաւ
խօսք առին Տոքթ. Մարտին, Փրոֆ.
Լ. Լեւոնեան և Վեր. Սթամպուլեան,
ի վերջոյ խօսեցաւ և պահպանիչով մը
վերջացուց թեմիս առաջնորդ Մազլըմ-
եան Սրբազան:

ՄԱՐԱՇԾԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ
Մէկ Մեծ ԳԻԻՏԸ: Միացեալ Նահանգ-
ներու Սփրինկֆիլտ քաղաքէն մեզի կը
գրուի թէ էլզին կամ Ասքանադ Ա.
Պետրոսեան, 21 տարեկան Մարաշցի և-
րիտասարդը, շատ կարեւոր գիւտ մը ը-
րած է: Տեղական թերթեր մեծ դովե-
տով կը խօսին Տ. Պետրոսեանի և անոր
գիւտին մասին՝ կոչելով զայն հանճար
մը միեւնոյն ատեն հրատարակելով տ-
նոր և իր բատիոյի գործիքին պատկե-
րը: Ասիկա ապակիէ օդախից շիշի մը
մէջ զետեղուած պարզ գործիք մըն է
որ բատիոյի մէջ գործածուող B և C պէ-
թլըրիններու տեղը պիտի գրաւէ: Պետ-
րոսեանի հնարած գործիքը շատ քիչ
տեղ կը զրաւէ, շատ աժան է, շատ եր-
կարատեն կրնայ գործածուիլ և մա-
նաւանդ 6էն մինչեւ 300 վոլդոյժով հ-
եկտրական հոսանքները կրնայ փո-
խանցել: Այս գործիքը կարելի պիտի
ըլլայ գործածել ելեկտրականութեամբ
գործող շատ մը մեքենաներու, սաւառ-
նակներու, օթօներու և այլնի մէջ: Սյո-
կերպով ահագին սպառում պիտի ու-
նենայ այս յոյժ կարեւոր գործիքը:

ՕՐ. ԲԵՐՍՍԻԷ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԹԵՂՐԱ-
նի մէջ հիմնած է պարսկական առաջին
մանկապարտէզը, որուն բացման հան-
դէսը կատարուած է նախագահութեամբ
կրթական նախարարութեան գերագոյն
խորհուրդի փոխնախագահին: Դաւ-
րէժի Պարբիկ երեսփոխանը մանկապար-
տէզի անհրաժեշտութեան և «Օր. Յով-
սէփեանի նախաձեռնութեան արժանի-
քին» մասին խօսած է:

ՅՐԷՋՆՈՅԻ Պանդխտաց Հայ Ժող. Եկեղեցիի ներքնասրահին մէջ Բարեգործականի տեղական մասնաճիւղին տարեկան հանդէս երեկոյթը կատարուած է և այս առթիւ մասնաճիւղի ատենապետը՝ Տիար Յ. Կոստանդեան՝ վկայական մը տուած է վեր. Մ. Կ. Փափազեանի, որ վերջերս Միջլիկայի Պատուոյ անդամ նշանակուած էր։ Մասնաճիւղի հիմնադիր անդամներէն 20 տարի շարունակ իրենց տուրքերը վճարողներն ալ արծաթեայ մետալներ սպաքացած են։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ԼՈՒՐԵՐ

Սելաքիկի մէջ գաղթականութիւնը ընդհանրացէս, չափազանց կը նեղուի տնտեսական տագնապէն։ Անգործներ խիստ շատ են։ Հայաստան միկնելու համար ներկայ պահանջին կրկինը արձանագրուած է արդէն։ Սա որոշ կը թուի թէ, Հայերու համար Յունաստան պապալ չի խոստանաք։

Մեր համայնքէն ալ Հայաստան մեկնելու համար արձանագրուողներ եղած են։ Վերջերս մեզ այցելեցին, Շուէտէի Փրոֆ. Կ. Պուլմպէրկ, և Դանիայէն Վեր. և Տիկ. Մ. Յիւրթուլ, որոնք մեր բնմէն ինչչա պատգամներով ոգեւորեցին համայնքը։

Հոկտեմբերի երկրորդ կիրակին միջ ժողովուրդին համար ներշնչման օր մը եղաւ. եկեղեցիին սրահը լեցուած էր արտասովոր բազմութեամբ մը։ Նոյն օրը կատարուեցան հաղորդութիւն և մկրտութիւն։ Անաթոլիա Գուլէճի ալեգարդ բայց վաւովուռն նախագահը՝ Տր. Ճ. Հոնայթ՝ իմաստալից խօսքերով օրուան պատգամը տալէ ետքը սպասարկեց սեղանին։ Զորս երախաներ մկրտուեցան։ Քառաձայն երկսեռ երգչախումբը, Օր. Ալմա Եուհանսընի առաջնորդութեամբ, հոգեպարար երգերով մթնոլորտը աւելի եւս ոգեւորեց։

Յառն ժողովի կարգադրութեամբ, եկեղեցին սարքեց ընկերային երեկոյթ մը Նոյ. 14 ին։ Մր. Ա. Հէլսըն երկրորդ անգամ ըլլալով տրամադրեց իր տունը ժողովուրդին։ Սոյն երեկոյթը փայլեցնելու և հասոյթը աւելցնելու համար կանանց օժանդակ ընկերակցութեան գործօն անդամուհիներու ջանքերը գնահատելի են։ Ասոնք կամաւոր նուէրներ հաւաքեցին ընտանիքներու մեծամասնութիւնէն։

Տիկնայք. Լ. Յովակիմեանի և Ա. Մորճիկեանի նուիրած մետաքսեայ անկողինի ծածկոցն ու հինգ պայուսակները երեկոյթի ժամանակ վիճակահանութեան դրուելով ապահովեցին 1100 Տրախմի։

Ջանասիրացի երկսեռ անդամները զուարճալի պատմութիւններով նուագով և երգերով, իսկ փոքրիկները իրենց մանկական արտասանութիւններով մեծ փայլ և ուրախութիւն պատճառեցին։ Ժողովուրդին մեծ մասը իրենց պաւակներով ներկայ էին, և խնդրեցին որ այսպիսի պատեհութիւններ կրկնուին։ Երեկոյթի հասոյթը, շուրջ հրեք հազար տրախմի, եկեղեցւոյ շէնքին ընթացիկ տարուան վարձքի հաշիւը փակեց։

Թանձնախումբ մը երկար ջանքերէ ետքը պատրաստեց մեր եկեղեցիին ներքին կանոնագիրը։

Ընդհանրապէս եկեղեցին և մասնաւորապէս երիտասարդութիւնը հոգ, օժտուած են ստեղծագործող թաքուն ուժերով։ Ամէն բան նկատի առնելով, կրնանք ըսել թէ ան ոչ միայն խաղաղ այլ նաեւ յաջող տարի մը բոլորեց։

Շատեր քաղաքիս մէջ Աստուծոյ թագաւորութեան լայնօրէն տարածման փափաքելով առատ օրհնութեան և հոգեւոր ուժի աղբիւրներ գարձած՝ անշուշտ կ'աշխատին։

Կ. ՅԱՐԱՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ գաղթողներու առաջին կարաւանը, 1000 հոգի, Յաւնաստանէն դէպի Պաթմա կը մեկնի Դեկ. 14 ին:

ԵՈՋԿԱՏԻ կուսակալութեան (Թուրքիա) ներկայիս հայ գիւղերուն թիւն է 22, որոնցմէ 16 ը այցելած է տեղին առաջնորդական փոխանորդը: Եռգկատի և 22 գիւղերու մէջ 633 հայ ընտանիքներ կամ 3016 անձեր կը գտնուին փոխանորդ հօր ճշգումներուն համեմատ:

ՓԱՐԻՋԻ Միջազգային ցուցահանդէսին մէջ Տիար Ռափայիկ Մելիք-Մինասեանց ցուցադրած է իր հնարած ճօճանակաւոր և առանց սլաքի ժամացոյցները: Սլաքի պաշտօնը կը կատարեն միշտ դարձող երկու զնդակներ: Հնարիչը ոսկի շքանշանով գնահատուած է:

ՈՒԷՍՏՆ. ԵՈՐՔԻ Հայ Երիցական եկեղեցիին մէջ, Նոյ. Տին, տեղի ունեցած է Հայ Ե. Ք. Զանից ընկերութեանց միջնահանգային համաժողովը, մասնակցութեամբ երեք նահանգներու պատուիրակներու: Խորհրդակցութեան նիւթ եղած է երիտասարդներու առօրեայ կեանքը հետեւեալ բաժանումներով. — 1. Յիսուս իմ Փրկիչս, 2. Յիսուս իմ Ասուցիչս, 3. Յիսուս իմ Առաջնորդս: Դիւանոր խօսողներն եղած են Վեր. Ս. Պ. Արեւեան, Մ. Գրիգորեան, Յ. Լ. Մինթէլ, Ա. Ա. Կէօրկիւզեան: Տիկ. Զ. Թաթարեան երգած և Տիար Արա Պոյան ջութակի վրայ նուագած է: Յառաջիկայ տարուան համար ընտրուած Միութեան պաշտօնեաներն են Տիգրան Քէօհնէլեան՝ նախագահ, Մ. Պոյաճեան և Զ. Մարտիրոս՝ փոխնախագահներ, Պ. Հէջ՝ քարտուղար, Փիթըր Գաֆաֆեան՝ գանձապահ, Լիտիա Նուսիքճեան՝ խորհրդական:

Վեր. ԱՅՐԱՀԱՄ ԿԱՐՈՒԹԻՆԵԱՆ տարւոյս Յուլիս 1 էն սկսեալ Պ. Այրէսի Հայ Աւետարանական եկեղեցւոյ բնմը

կը վարէ: Տառապանաց անգղի տառապանքի զաւակ: Տարագրութեան տարիներուն Այնթապի Գալէնի շէնքին մէջ արգելափակ մնացած է, Մարաշի դէպքը աչքով տեսած և մէջէն հրաշքով ազատած է: Իզմիրի հրդեհը և ջարդը ամբողջ ընտանիքին սպառնացած, բայց դարձեալ հրաշքով մը անկէ ալ տառապանած է: Մեր ցաւերը, վէրքերը գիտէ: Իր հաւատքը պահած է: Փորձառական հաւատք մը ունի, և ոչ գիրքերու ըսածին համեմատ միայն զաւանանք մը: Կարիւր գործերը եղան Աւետարանական ժողովուրդի մէկ կանոնաւոր արձանագրութիւնը կատարել, և երիտասարդաց Զանից ընկերութիւնը կազմել: Ներկայիս երեսունէն աւելի երկսեռ անդամներ ունի. հանրային ժողովները հայերէն լեզուով կը կատարուին, որոնք կը բաղկանան աղօթատողովէն, վիճարանութեան ժողովներէն և լսարանական ժողովներէն: Կը յաւանք թէ Վեր. Ա. Յարութիւնեան պիտի յօժարի հոս մնալ մէկէ աւելի տարիներ: Պ. Այրէս Բղթակից

ԳԱՂԹԱԿԱՆ Մանուկներու Պաշտպան Կոմիտէի միջոցաւ երեսնեակ մը Հայ որբեր Յաւնաստանէն Ֆրանսա փոխադրուած փն Ֆրանսացի երկրագործներու քով աշխատելու համար: 70 տարիչ հայ որբեր այս նպատակի համար արդէն ընտրուած են Յաւնաստանի մէջ, և պիտի փոխադրուին Ֆրանսա: Լը Ֆուայի:

ՅԻՍՈՒՍԵԱՆ (ճիզուէթ) ընկերութեան Արեւիք հաստատութեան հարիւրամեակը տօնուած է Պէյրութի մէջ Նոյ. 15 ին:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ մէջ աշխարհի բոլոր իսլամներու մասնակցութեամբ իսլամական միժ համաժողով մը գումարուած է ներկայիս: Օրակարգի ամենակարեւոր հարցն է խալիֆայի մը զնտրուութիւնը:

FURST McNESS Ի ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն

ու շինիչ ազդեցութեամբը,

ուստի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբուժական զօրծողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն**Furst mcness cod liver oil extract**Կոչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան լուլ (կենսահիւթ
«Ա» և «Դ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր գինի, երկաթ, մանկանէլ,
և այլն:Մեծապէս ԱՆՈՐԺԱՀԱՄ է, ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿՈՒԺՈՎՑՆԷ:**ՀԱԶ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ**

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթիւր և
մենթոլ:Բորբոքած եւ գրգռուած կոկորդի քաղաքներուն վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժանամ եւ անուշ է:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

صاحب الامتياز والمدير المسئول القس ق. هاروتونيان